Որք լուանն՝ անհաւան եղեն յասացելոցս որ ան-
պատշաճ և անյարմար։ Եւ անկաք յիրեար, ասացաք
խորհեցաք և մեք, և գրեցաք Սուրբ Սարգսոյ ժողո-
վրդականքս՝ ներսեցի և դրսեցի՝ զգործակալս եկե-
ղեցոյ փոխելոյ աղագին. Զս՛ ոք որ հաճիմք և հաւա-
նիմք՝ զմուստէխիմ մարդ դնեմք և հաստատեմք այս
ուխտիւ, որ զախարէթն ի մի քէսէ ժողովեմք և զա-
մէնն իմանամք, և եկեղեցական առին և տրին մէջն
բնաւին երէց չի խառնվի և զմօհրն քէսի մէջ դնեմք
և Ի մարդոյ մօհրի տակ պահեմք, և զինչ մասլահաթ
լինի՝ ներսեցիս և դրսեցիս սիրով և միաբանութեամբ
մուշավէրէով առնեմք և իրերաց չբաժանիմք. վասն
որոյ գրեցաք և ուրոյն ուրոյն մօհրեցաք։ Բանզի ի
նախանձ շարժեալ ևս՝ հանել կամեցան զԻ չար Ա-
տուածատուրն և զՂալֆան ի ձեռն միջնորդաց, ա-
սին մերայինքս՝ լինել. ոչ կամեցաւ, զի յայն կողմ
էր և մերձ Մուղնեցուն. նա՛ մեծն և Ցակոբն Խաս-
քեօյու, այսպէս և յամենայն յեկեղեցի մի մի և եր-
կու երկու և այլ շատ Պօղոսեան և Ապօղոսեան։

Եւ Շաբաթ (22 Սեպտ.) երեկոյիս զկիրակամտի
թապախն շուրջ ածին և Մահտեսին մեր էառ զդրամն
և ծրարեաց։ Յայնժամ Էսիլի թոռն և Տէր Խաչա-
տուրն և Տէր Պետրոսն միաբան վազեցին ի վերայ թէ
Ցէ՞ր կ՛առնես զըստակն. եւ կռիւ սահմանեալ մեծ,
մինչդեռ զՍուրբ Աստուածն ասէին, Տէր Յովանէս եւ
Տէր Մարտիրոս և այլք ընդ մեր, բայց նոքա առա-
ւելացուցին թէ վասն է՞ր առեր զըստակն։ Պատաս-
խանելով սոցա թէ Այսուհետև մեք կ՛առնեմք զաթո-
ռակալութիւն թէ՛ վասն մարդկան և թէ՛ վասն Ա-
տուծոյ. նոքա այնչափ արին բաւ է, եւ մեք եւս ա-
րասցուք։ Եւ Տէր Խաչատուրն ասէ. Մեք ծ եղբարք
եմք, կու բաժանիմք ի ձէնջ։ Խաբանեցաւ ժամն եւ
կռվեցան մինչև երեկոյացաւ, եւ մի մի գնացին։